

Արձանագրություն №3/2012-2013

<<Երևանի պետական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2012թ. դեկտեմբերի 17-ին տեղի ունեցած թիվ 3 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 71-ը (յոթանասունմեկ): Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ԵՊՀ 2010-2014թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի մասին: (Ձեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Միմոնյան)
2. ԵՊՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի կատարման մասին: (Ձեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Միմոնյան)
3. <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2012թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) կատարողականը (հունվար-նոյեմբեր) հաստատելու մասին: (Ձեկ.՝ գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան)
4. <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2013թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) մասին: (Ձեկ.՝ գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան)
5. ԵՊՀ-ում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգում փոփոխություններ կատարելու մասին: (Ձեկ.՝ ԵՊՀ պրոռեկտոր Գ.Գ. Գևորգյան)
6. ԵՊՀ գիտական համակազմի մրցութային ընտրության եվ պաշտոնների տեղակալման ընթացակարգը հաստատելու մասին: (Ձեկ.՝ ԵՊՀ պրոռեկտոր Գ.Գ. Գևորգյան)
7. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2011-2012 ուս. տարվա գործունեության մասին: (Ձեկ.՝ մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյան)
8. ԵՊՀ անվտանգային հետազոտությունների կենտրոնի կանոնադրության հաստատում: (Ձեկ.՝ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ Ա. Գ. Ղևոնդյան)
9. Ընթացիկ հարցեր
 - 9.1 ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի կանոնադրության հաստատում:
 - 9.2 Հայ գրատպության սկզբնավորման 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային երիտասարդական գիտաժողովի հողվածների ժողովածուն (հասարակական և բնական գիտություններ առանձին պրակներով) տպագրության երաշխավորելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.- ԵՊՀ 2010-2014թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի մասին:** Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը ընդհանուր գծերով ներկայացրեց ռազմավարական ծրագրի՝ 2011-2012 ուստարում նախատեսված գործողությունների կատարողականը՝ անդրադառնալով հետևյալ խնդիրներին. 1/ կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում, 2/եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան որակի ներքին հավաստման համակարգի ներդրում, 3/ Ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար նպաստավոր պայմանների և խթանող մեխանիզմների ստեղծում, 4/ հասարակայնության հետ կապերի հետագա զարգացման ապահովում և հանրային ծրագրերում Համալսարանի առավելագույնս ներգրավում, 5/ դասախոսական համակարգի համալրում և բարելավում և այլն:

Որոշեցին.-

1. Տալ հավանություն ԵՊՀ 2010-2014թթ. զարգացման ռազմավարական ծրագրի՝ 2011-2012 ուստարում նախատեսված գործողությունների կատարողականին և ընդունել կատարողականի մասին զեկույցն ի գիտություն:
2. Հանդես գալ ԵՊՀ խորհրդի առջև՝ ԵՊՀ 2010-2014թթ. զարգացման ռազմավարական ծրագրի՝ 2011-2012 ուստարում նախատեսված գործողությունների կատարողականը հաստատելու միջնորդությամբ:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2. **Լսեցին. - ԵՊՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի կատարման մասին:** Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը ներկայացրեց միջոցառումների ծրագրի՝ 2011-2012թթ. նախատեսված գործողությունների կատարողականը՝ կենտրոնանալով հետևյալ խնդիրների վրա. 1/ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը համակարգող հանձնաժողովի ստեղծումը, 2/ <<Երևանի համալսարան>> թերթում երևույթին առնչվող նյութերի հրատարակումը, 3/ ուսանող-դասախոս երկկողմ պատշաճ շփումների մշակույթի արմատավորումը և այլն:

Որոշեցին. –

1. Տալ հավանություն Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երեվույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի՝ 2011-2012 թթ. նախատեսված գործողությունների կատարողականին և ընդունել կատարողականի մասին զեկույցն ի գիտություն:
2. Հանդես գալ ԵՊՀ խորհրդի առջև՝ Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երեվույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի՝ 2011-2012 թթ. նախատեսված գործողությունների կատարողականը հաստատելու միջնորդությամբ:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
3. **Լսեցին. - <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2012թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) կատարողականը (հունվար-նոյեմբեր) հաստատելու մասին:** Գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյանը ըստ հողվածների ներկայացրեց կատարողականը, որը նախապես տրամադրվել էր գիտխորհրդի անդամներին:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Սահակյանը, Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ Դ. Սեդրակյանը, իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը:

Որոշեցին. – Ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին.** - <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2013թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) մասին: Գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյանը ներկայացրեց նախահաշիվն ըստ հոդվածների:

Արտահայտվեցին. – Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, դիսկրետ մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ալեքսանյանը, տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը:

Որոշեցին. -

1. Տալ հավանություն <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2013թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագծին:
2. <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2013թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագիծը ներկայացնել ԵՊՀ խորհրդի քննարկմանն ու հաստատմանը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

5. **Լսեցին.**- **ԵՊՀ-ում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգում փոփոխություններ կատարելու մասին:** Պրոռեկտոր Գ.Գ. Գևորգյանը ներկայացրեց ֆակուլտետների ու այլ ստորաբաժանումների կողմից ստացված առաջարկությունները կարգում փոփոխությունների վերաբերյալ և կատարեց պարզաբանումներ դրանց մասին Արտահայտվեցին. – Կենսաբանության ֆակուլտետի դեկան Է. Գևորգյանը, ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը, հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Աղասյանը, ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Ավագյանը:

Որոշեցին. –

1. Հաստատել ԵՊՀ-ում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգը նոր խմբագրությամբ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

6. **Լսեցին.** - **ԵՊՀ գիտական համակազմի մրցութային ընտրության եվ պաշտոնների տեղակալման ընթացակարգը հաստատելու մասին:** Պրոռեկտոր Գ.Գ. Գևորգյանը ներկայացրեց ընթացակարգի հիմնական դրույթները, որը նույնպես նախապես տրամադրվել էր գիտխորհրդի անդամներին:

Արտահայտվեցին. – Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը, ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ Դ. Սեդրակյանը, իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը, կենսաբանության ֆակուլտետի դեկան Է. Գևորգյանը, բուսաբանության ամբիոնի պատվավոր վարիչ Լ. Օսիպյանը: Քվեարկությունն անցավ 69 կողմ, 2 դեմ (Դ. Սեդրակյան, Է. Չուբարյան) ձայներով:

Որոշեցին. –

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի գիտական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ից:

7. **Լսեցին.** - **ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2011-2012 ուս. տարվա գործունեության մասին:** Մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը կանգ առավ մի շարք խնդիրների վրա. 1/ Ուսումնական պլանների վերափոխում՝ տեսականից պրակտիկ

կարողությունների զարգացման նկատառումներով, 2/ դասախոսական կազմի ուսումնամեթոդական, գիտական որակավորման բարձրացում, 3/ մասնաճյուղի համագործակցության շրջանակների ու ոլորտների ընդլայնում և բազմազանեցում և այլն:

Արտահայտվեցին. – Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Ավագյանը, տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը, գրադարանի տնօրեն Ե. Միրզոյանը:

Որոշեցին. –

1. Հավանություն տալ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2011-2012 ուստարվա գործունեությանը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

8. Լսեցին. – ԵՊՀ անվտանգային հետազոտությունների կենտրոնի կանոնադրության մասին: Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ Ա.

Ղևոնդյանը ներկայացրեց կենտրոնի կառուցվածքն ու գործունեության հիմնական ուղղությունները (կանոնադրության նախագիծը նախապես տրամադրվել էր գիտխորհրդի անդամներին):

Որոշեցին. – 1. Հաստատել ԵՊՀ անվտանգային հետազոտությունների կենտրոնի կանոնադրությունը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

9. Լսեցին. – **Ընթացիկ հարցեր:**

9.1 Լսեցին. – ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի կանոնադրության հաստատման մասին:

Գիտքարտուղար Մ. Սողոմոնյանն ասաց, որ ֆակուլտետի կանոնադրությունն ընդհանուր առմամբ բխում է ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունից:

Արտահայտվեցին. – Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Մկրտչյանը, սովորող Ա. Սարգսյանը:

Որոշեցին. – Հաստատել ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի կանոնադրությունը:

9.2 Լսեցին. – **Հայ գրաստայության սկզբնավորման 500-ամյակին և ԵՊՀ ՌԻԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային երիտասարդական գիտաժողովի հոդվածների ժողովածուն (հասարակական և բնական գիտություններ առանձին պրակներով) տպագրության երաշխավորելու մասին:**

Որոշեցին. – Ժողովածուն երաշխավորել հրատարակման:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

24.12.2012թ.